Դէպի՛ Ալեքսանդրապոլ... Այս մարտակոչը հարազատ էր ամենքին— և՛ յաղթական ու հպարտ զօրքին, և՛ անխուսափելի մահից ազատուած ժողովրդին: Ոգեւորուած՝ ամենքն ապրում էին Ալեքսանդրապոլը վերադարձնելու գաղափարով: Եւ մինչ զօր. Սիլիկեանը պատրաստւում էր ընդհանուր յառաջխաղացման, հեռագիր ստացուեց, որ Բաթումում ստորագրուել է հաշտութեան դաշնագիր. զօր. Նազարբէգեանը հրամայում էր կնքել զինադադար...

Կարելի է երեւակայել, թէ այս լուրը ի՞նչ տպաւորութիւն գործեց Երեւանում ու բանակի մէջ. յուսահատութիւնը անսահման էր. Ազգային Խորհուրդը անընդհատ նիստեր էր գումարում, բայց որոշ եզրակացութեան չէր կարողանում յանգել. մեծամասնութիւն չէր կազմւում: Արամը գրեթէ չէր մասնակցում այդ նիստերին. նա ամփոփուել էր իր մէջ և սպասում էր զօր. Նազարբէգեանին: Ազգ. Խորհուրդն ալեկոծւում էր առանց նրան. ոմանք առաջարկում էին հաշտուել կացութեան և ընդունել Բաթումի դաշնագրի պայմանները, ուրիշները —գլխաւորապէս, դաշնակցականները—պահանջում էին չեղեալ համարել զօր. Նազարբէգեանի հեռագիրը հաշտութեան մասին, զօրքերի ընդհանուր հրամանատար նշանակել զօր. Սիլիկեանին և շարունակել պայքարը: Այս առաջարկի կողմնակիցներին թւ էր տալիս և զօրքի խիստ բացասական վերաբերումը դէպի Բաթումի դաշնագիրը. առաջաւոր դիրքերից հեռագիրներ էին տեղում, որոնք բողոքում էին այդ դաշնագրի դէմ և խնդրում էին Ազգ. Խորհրդին՝ շարունակել պատերազմը: Այս տրամադրութեան ոյժ էր տալիս, մանաւանդ, այն հանգամանքը, որ, ըստ դաշնագրի պայմանների, երկրի ամենահարուստ մասերը յանձնում էին թշնամուն, և Ղամարլուն, որ դեռ չէր գրաւած թիւրքերի կողմից, բայց դաշնագրով պիտի անցնէր նրանց, հարիւրաւոր ներկայացուցիչներ էր ուղարկել Երեւան, որոնք ցոյց արին Ազգ. Խորհրդի առջև՝ պահանջելով մերժել Բաթումի դաշնագիրը: Ցուցարարները — կանայք ու օրիորդներ — դրօշակները ձեռներին՝ կանգնում էին Ազգ. Խորհրդի շէնքի առջև և ներկայացուցիչների բերանով յայտարարում, թէ իրենց շրջանը ամբողջ ունեցածքն ու կուռդ ուժերը տրամադրում է Ազգ. Խորհրդին, միայն թէ թշնամու պայմանները չընդունեն:

Վճիռ տալը անչափ դժուար էր. վտանգը շատ էր մեծ: Հայկական զօրքերի ընդհանուր քանակը այդ օրերին հասնում էր 30 ոչ լրիւ գումարտակների, մինչդեռ Թիւրքիան շարժման մէջ էր դրել 5 դիվիզիա (3րդ, 5րդ, 9րդ, 11րդ և 36րդ), այսինքն՝ 50 գումարտակ և ի վիճակի էր նորանոր ուժեր հասցնելու: Հայ զինուորների թիւը 12,000ը չէր անցնում. Թիւրքերն առաջ էին քաշել 35,000 կուռդ:

Ազգ. Խորհուրդը չկարողացաւ միակամութիւն երեւան բերել, և զօր. Սիլիկեանին մնաց ենթարկուել զօր. Նազարբէգեանի հրամանին: Պատերազմը վերջացաւ: Ղամարլուի շրջանի բնակչութեան մի մասը անմիջապէս գաղթեց. միւսը հեռացաւ Թիւրքերի գալուց յետոյ: